ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/65

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Է.Փոթոյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ թիվ 273.110.1085248),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3198-2021 գրությամբ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1003-2021 գրության հիման վրա 04.03.2021թ. թիվ 26/26-1/3198-2021 գրությամբ նախաձեռնել է «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.03.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն 22.11.2019թ. մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարած թիվ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 29.01.2020թ.-ին կնքել է թիվ ԳՀԱՊՁԲ-20-9/17-4 պայմանագիրը:

Պայմանագիրը կնքելու պահին մեր կազմակերպությունը չէր կարող կանխատեսել, որ ի հայտ են գալու այնպիսի ֆորս մաժորային իրավիճակներ, որոնք խիստ կսահմանափակեին հնարավորությունները և որի գործողությունը անհնար կդարձներ պայմանագրի լիարժեք կատարումը:

Մասնավորապես ներկայացված բոլոր ապրանքները պետք է ներկրվեին Չինաստանից, սակայն աշխարհում տիրող կորոնավիրուսի համավարակը և Չինաստանի արտադրողների համատարած պարապուրդը և վերապրոֆիլավորումները թույլ չտվեցին ժամանակին ներկրել ապրանքները:

16 մարտի 2020 թվականին ՀՀ կառավարությունը թիվ N 298-Ն որոշումով ՀՀ-ում հայտարարում է արտակարգ դրություն:

Դրանից հետը 2020թ.-ի սեպտեմբերի 27 ՀՀ կառավարությունը թիվ N 1586-Ն որոշումով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարում է ռազմական դրություն:

3 հոկտեմբերի 2020 թվականին ՀՀ կառավարությունը թիվ N 1586-Ն որոշումով սահմանվում է ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԴԵՂՈՐԱՅՔԻ, ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ, ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԸ ԵՎ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ կարգը:

Այդ ստեղծված պայմաններում արել ենք ամեն ինչ, որ ապահովենք պետությանը առաջնահերթ դեղորայքով:

Այստեղ ակնհայտ գործում է ԳՀԱՊՁԲ-20-9/17-4 պայմանագրի 7-րդ կետը.

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Պայմանագիրը կնքելուց հետո ՀՀ-ում հայտարարվել է արտակարգ դրություն, ապա նաև ռազմական դրություն, որի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/65 ընթացակարգի շրջանակներում 12.03.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և ներկայացրել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.03.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1003-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ

պաշտպանության նախարարությունը՝ ամփոփելով լուծարման արդյունքում առաջացող տույժերի և տուգանքների վերաբերյալ տվյալները, 30.12.2020թ. դրությամբ միակողմանի մասնակի լուծել է՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/17-4 ծածկագրով գնման պայմանագիրը և դրան կից 02.06.2020թ. կնքված N1 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի, համաձայնագրի լուծման վերաբերյալ գրությունը 26.02.2021թ. միաժամանակ ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Կից ներկայացվում են Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/65 ընթացակարգի շրջանակներում 12.03.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքվել է N «ԳՀԱՊՁԲ-20-9/17-4» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ՀՀ պաշտպանության նախարարության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 02.06.2020թ. կնքվել է N «ԳՀԱՊՁԲ-20-9/17-4» պայմանագրի գնման և վճարման

ժամանակացույցերը հաստատելու մասին N 1 համաձայնագիրը (հետայսու նաև՝ Համաձայնագիր):

3. Համաձայնագրի հավելված 1-ով, գնման ժամանակացույցի համաձայն, «Ջերմաչափ բժշկական» 500 հատ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 1-ին եռամսյակը, «Կատետեր երակային G-18 ներարկման ելքով» 3000 հատ, «Կատետեր երակային G-20 ներարկման ելքով» 3000 հատ, «Կատետեր երակային G-22 ներարկման ելքով» 2500 հատ, «Ռենտգեն ժապավեն 18×24 N100» 40 հատ, «ԷԿԳ ժապավեն 50մմ×30մ» 1500 հատ և «Թուղթ ԹԿԳ-ի BLT LT Plus համար» 60 հատ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 2-րդ եռամսյակը, «Սոնոգել ուլտրաձայնային հետազոտությունների դոնդող 250գ» 1000 հատ, «Ջերմաչափ բժշկական» 2500 հատ, «ԷԿԳ ժապավեն 50մմ×30մ» 1500 հատ և «Թուղթ ԹԿԳ-ի BLT LT Plus համար» 60 հատ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 3-րդ եռամսյակը, իսկ «Սոնոգել ուլտրաձայնային հետազոտությունների դոնդող 250գ» 1000 հատ, «Ջերմաչափ բժշկական» 3000 հատ, «Կատետեր երակային G-18 ներարկման ելքով» 3000 հատ, «Կատետեր երակային G-20 ներարկման ելքով» 3000 հատ, «Կատետեր երակային G-22 ներարկման ելքով» 2000 հատ, «Ռենտգեն ժապավեն 18×24 N100» 40 հատ և «Տոնոմետր ֆոնէնդոսկոպով» 800 լրակազմ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը:

4. «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 25.02.2021թ. թիվ ՆՏԱ-669 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-20-9/17-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 02.06.2020թ. կնքված N 1 Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել՝ 5500 հատ «Ջերմաչափ բժշկական», 2-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում՝ 80 հատ «Ռենտգեն ժապավեն 18×24 N100», 4-րդ եռամսյակի ընթացքում՝ 800 լրակազմ «Տոնոմետր ֆոնէնդոսկոպով», որոնց մասով Պայմանագրով դրան կից կնքված N 1 Համաձայնագրով նախատեսված պայմանների համապատասխան «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը, Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Համաձայնագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 26.02.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը և դրա հիման վրա կնքված համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ 26/26-1/3198-2021 գրությունը, 01.03.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1003-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***<u>պատասխանատու է մեղքի առկայության դեպքում</u>***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի*, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերը նշված իրավակարգավորումները ցույց են տալիս, որ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Ընդ որում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում, արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Այլ կերպ ասած՝ պարտավորությունը չկատարած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողը ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության չկատարումը և (կամ) անպատշաճ կատարումը պայմանավորված է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում, արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Եվ այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքվել է N «ԳՀԱՊՁԲ-20-9/17-4» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 02.06.2020թ. կնքվել է N «ԳՀԱՊՁԲ-20-9/17-4» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին N 1 համաձայնագիրը:

Համաձայնագրի հավելված 1-ով, գնման ժամանակացույցի համաձայն, «Ջերմաչափ բժշկական» 500 հատ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 1-ին եռամսյակը, «Կատետեր երակային G-18 ներարկման ելքով» 3000 հատ, «Կատետեր երակային G-20 ներարկման ելքով» 3000 հատ, «Կատետեր երակային G-22 ներարկման ելքով» 2500 հատ, «Ռենտգեն ժապավեն 18×24 N100» 40 հատ, «ԷԿԳ ժապավեն 50մմ×30մ» 1500 հատ և «Թուղթ ԹԿԳ-ի BLT LT Plus համար» 60 հատ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 2-րդ եռամսյակը, «Սոնոգել ուլտրաձայնային հետազոտությունների դոնդող 250գ» 1000 հատ, «Ջերմաչափ բժշկական» 2500 հատ, «ԷԿԳ ժապավեն 50մմ×30մ» 1500 հատ և «Թուղթ ԹԿԳ-ի BLT LT Plus համար» 60 հատ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 3-րդ եռամսյակը, իսկ «Սոնոգել ուլտրաձայնային հետազոտությունների դոնդող 250գ» 1000 հատ, «Ջերմաչափ բժշկական» 3000 հատ, «Կատետեր երակային G-18 ներարկման ելքով» 3000 հատ, «Կատետեր երակային G-20 ներարկման ելքով» 3000 հատ, «Կատետեր երակային G-22 ներարկման ելքով» 2000 հատ, «Ռենտգեն ժապավեն 18×24 N100» 40 հատ և «Տոնոմետր ֆոնէնդոսկոպով» 800 լրակազմ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 25.02.2021թ. թիվ ՆՏԱ-669 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և ««Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 29.01.2020թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-20-9/17-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 02.06.2020թ. կնքված N 1 Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել՝ 5500 հատ «Ջերմաչափ բժշկական», 2-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում՝ 80 հատ «Ռենտգեն ժապավեն 18×24 N100», 4-րդ եռամսյակի ընթացքում՝ 800 լրակազմ «Տոնոմետր ֆոնէնդոսկոպով», որոնց մասով Պայմանագրով դրան կից կնքված N 1 Համաձայնագրով նախատեսված պայմանների համապատասխան «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը, Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Համաձայնագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 26.02.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը և դրա հիման վրա կնքված համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն ՍՑ-ՆԳ-2020/65 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչել է այն հանգամանքը, որ Պայմանագիրը կնքելու պահին Ընկերությունը չէր կարող կանխատեսել, որ ի հայտ են գալու այնպիսի ֆորս մաժորային իրավիճակներ, որոնք խիստ կսահմանափակեին հնարավորությունները և որի գործողությունը անհնար կդարձներ պայմանագրի լիարժեք կատարումը:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների

խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ ***Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են*** երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ***ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը***, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: ***Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:***

Այսպիսով՝ Պայմանագրի 7-րդ կետի ուժով գտնում եմ, որ Ընկերության՝ վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***քանի որ «Ադիդաս թրեյդ» ՍՊԸ-ն նման պայմաններում, այն է՝ պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի՝ Covid-19 համավարակի արդյունքում ստեղծված արտակարգ դրության և դրա հետևանքով կիրառված սահմանափակումների, ինչպես նաև ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու, որոնց ազդեցությունը շարունակվել է 3 (երեք) ամսից ավելի, օբյեկտիվորեն իր կամքից անկախ պատճառներով զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելու հնարավորությունից:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.03.2021թ. թիվ

26/26-1/3198-2021 գրությամբ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**